

# ՀՀ ԱԺ պատգամավոր Մխիթար Հայրապետյանը Վայոց ձորում

05.03.2019



Այսօր Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանի հետ այցելեցինք Եղեգնաձորի մարզային մշակույթի կենտրոն և Եղեգնաձորի երկրագիտական թանգարան:

Շատ տպավորիչ այցի շրջանակներում եղանք գրադարանում, տեսանք թատրոնի դահլիճը, երգի ու պարի՝ տարբեր ժանրերի պարապմունքների ականատես եղանք: Ուրախ եմ տեսնել, որ մարզերում երեխաների ու պատանիների համար մշակութային օջախները հետաքրքրություն են ներկայացնում և դասերից հետո ազատ ժամանակը նրանք նախընտրում են անցկացնել հենց այսպիսի վայրերում: Մշակույթի տան սաները մշտապես մասնակցում են հանրապետական մրցույթների, զբաղեցնում մրցանակային տեղեր:

Այնուհետև գնացինք քիչ հեռու գտնվող երկրագիտական թանգարան: Վերջինս ունի բացառիկ ցուցանմուշներ, որոնք կարող են մեծ հետաքրքրություն ներկայացնել Հայաստան այցելող զբոսաշրջիկների համար: Գովելի է, որ թանգարանի աշխատակիցները ունեն մասնագիտական անհրաժեշտ որակներ ու նվիրված են իրենց աշխատանքին:

Աշխատակիցների հետ ունեցած զրույցի ընթացքում բարձրացված հարցերից շատերին տրվեցին օպերատիվ լուծումներ, իսկ մյուս մասին, որոնք ավելի ժամանակատար են, կանդրադառնանք մայրաքաղաք վերադառնալուն պես:

Մխիթար Հայրապետյան / Mkhitar Hayrapetyan (Ֆեյսբուքյան էջ)

